

սաղըր փարմագ : Որով կ'ըլլայ 1 խորանարդ սաղ փարմագը = $0\text{մ}^3\cdot\text{խ},000029$,
և 1 խորանարդ սաղըր փարմագը = $0\text{մ}^3\cdot\text{խ},000000017$:

Եւ փոխադարձաբար խորանարդ մեղրը խորանարդ ճարտարապետական կանգնոյ վերածելու համար տեսանք որ $1\text{մ}^3 = 1\text{ա}^3\cdot\text{կ},319717$, ուստի խորանարդելով՝ կը գտնենք որ $1\text{մ}^3\cdot\text{խ} = 2\text{ա}^3\cdot\text{կ}\cdot\text{խ}$, 098489 . որով խորանարդ տասնորդամեղրն ալ կ'ըլլայ $0\text{ա}^3\cdot\text{կ}\cdot\text{խ},002098$, խորանարդ հարիւրորդամեղրն ալ կ'ըլլայ $0\text{ա}^3\cdot\text{կ}\cdot\text{խ},000002$, և այլն :

Ս'եծամեծ մարմնոց տարածոցը չափելու համար, ինչպէս են օրինակի համար երկնային մարմինները, Տաճկաց մէջ խորանարդ ցամաքային մղոնը կըրնայ գործածուիլ . որ խորանարդ հազարամեղրի և խորանարդ բիւրամեղրի վերածելու համար տեսանք որ ցամաքային մղոնն էր $\frac{354\text{մ}^3}{3}$, և $\frac{354\text{մ}^3}{30}$. որմէ 1 խորանարդ ցամաքային մղոնը կ'ըլլայ = $\frac{123\text{բիւրմ}^3\cdot\text{խ}}{27000} = 0\text{բիւրմ}^3\cdot\text{խ},004629$:

Եւ փոխադարձաբար $1\text{բիւրմ}^3\cdot\text{խ} = \frac{27000\text{ցմ}^3\cdot\text{մղ}^3\cdot\text{խ}}{123} = 216$ խորանարդ ցամաքային մղոն :

Ուզելով հիմա երկրիս տարածոցը Տաճկաց խորանարդ մղոնով բացատրել, տեսանք որ այս տարածոցն էր մերձաւորապէս 1083150000 խորանարդ բիւրամեղր . արդ 1 խորանարդ բիւրամեղրն ըլլալով 216 խորանարդ ցամաքային մղոն Տաճկաց, ուրեմն երկրիս տարածոցն ալ կ'ըլլայ մերձաւորապէս 233960400000 խորանարդ ցամաքային մղոն Տաճկաց :

(ԳԻՏԻ ՀԱՐՈՒՆԱԿՈՒԻ)

ՏՆՏԵՍԱԿԱՆ

Պարու պահելու հարիւր իւրից հին և :

Կարիւր ու ճերմակ հաղարջ 1 հաբիլ ըբծ . Դեռ լաւ չհասունցած՝ քաղէ ու հատիկ ըրէ, որպէս զի վերջէն լեղիուծիւն չունենայ . ետքը մէկ եփ մը միայն տուր, որն որ սովորաբար բաւական կ'ըլլայ :

Ամէն քէսակ աւել . Բաղած առենգ նայէ որ քիչ մը կարծրկեկ ըլլան, և թէ կոթովը ուզես, թէ առանց կոթի՝ կրնաս անմիտ կերպով պահել զանոնք . մէկ եփ մը բաւական է պզտիկ տեսակներուն համար, բայց աւելի կարծր եղողներուն համար երկու եփ հարկաւոր է :

Դեղի, Ծիւրն, Լեւի Դեղի 2 . Այս ետքինս պէտք է կեղեկել, ապա թէ ոչ լեղիուծիւն կ'ունենայ . իսկ առաջինները պէտք է որ հասունանալու մօտ դեռ քիչ մը կարծրկեկ եղած առենին քաղես . ու ետքը ամենուն ալ մէկ եփ մը տալով՝ ամբողջ կը պահես :

Սեւիւն 3 . Ընդ հակառակն ասիկայ լաւ հասունանալէն ետքը ժողվէ ու վրայի եղած աղուաւ մաղը մաքրէ . ետքը կրակի վրայ ամանով ջուր գիր, ու եփ ելած առենին՝ ուրիշ ամանի մէջ դնելով սերկեկիք տաք ջրով կաթսային մէջ խոթէ, ուր կէս ժամ մը պէտք է որ թողուս :

Հարիւրն 4 ու իրարմէն 5 վեց վայրկեան եփը բաւական է :

Եւսի 6 ու արհաւելի հարիւր 7 . Այս պտուղներուն ամենափափուկ ու դիւրակորնէն անուշահոտութիւնը պահելու համար բերանին լաւ գոց շիշերու մէջ գիր, ու անանկ եփ ելած ջրի մէջ խոթէ :

Կէսաւ, լայրի կէսաւ, կաթի 8, Լաւ . Չասոնք մէկ կամ երկու անգամ եփ գիր՝ ամենեւին մի և նոյն կերպով, ինչ որ վերն ըսինք սերկեկիւն համար, և կոթերնին ալ վրայէն փրցուր : Սովորաբար այս պտուղները հոյզ 9 դարձնելով կը պահեն, որ ետքէն պիտի դնենք :

1 ՏՃ . Ֆրէնի Խալի-Ֆու :

2 Գղ . Brugnion .

3 ՏՃ . Ալի :

4 ՏՃ . Փարիս-Գալ :

5 ՏՃ . Ալաճ Գալ-Լաւ :

6 ՏՃ . Չիւէ :

7 Գղ . Framboise .

8 ՏՃ . Խալ-Բիւրն :

9 ՏՃ . Էօլ :